

## Թ Ի Թ Ե Ռ Ե Ր Ո Ւ Ե Տ Ե Ի Է Ն

Պրզտիկ աղջիկ, պարի՞կն ես  
 Թիթեռներու թըփայած,  
 Որ իրենց շուրջ կը վազես,  
 Մազերդ հովին փոխ տըւած:

Հազիւ հրպած մատերուդ,  
 Կամ շըւարուն՝ մազերէդ,  
 Կայծերու պէս բոցանուտ՝  
 Կը խուսափին հովին հետ:

Հոտ կարմիրին ցիշդ քովն ես,  
 Կապոյտներն ալ թըւան ցած,  
 Ճերմակներուն կը վազես,  
 Ափերդ օդին մէջ բացած:

Ու ես յոյզով կը խորհիմ  
 Թէ օր մը քու, պրզտի՛կ քոյր,  
 Մանուկ իզմերդ այս ուշիմ  
 Պիտի խամրին կեանքէն կոյր:

Դէմքիդ վարդերն առտըւան՝  
 Պիտ՝ ցըրուէ սէրն առեղծուած,  
 Վիհեր աչքիդ մէջ խորնան՝  
 Նոր թեւերովդ լո՛ւռ պեղուած:

Մոռցած լեզուն բընութեան,  
 Այլ եւս ազանջ երբ չըտաս  
 Թըւչուններուն նըրբածայն,  
 Պիտ՝ այն ատեն դուն զըղջաս...:

Ո՛հ նոյն իսկ ես կը վախնամ  
 Թէ խօլ բոցով մը այրիս,  
 Գուցէ գիշեր մ՞ուժաքամ՝  
 Անհուն լացով մարմըրիս...:

Ո՛չ, չեմ ուզեր ըլլաս ծեր-  
 Դէմքիդ վըրայ լուսեղէն  
 Քաշէ արցունքն իր գիծեր՝  
 Կաթած սիրտիդ երկինքէն:

Թող բըլանցքէդ շըղարշէ,  
 Փոխան սա նուրբ բոյրերուն,  
 Հոտն ալ քոլին չըբուրէ  
 Յայգատօնէ մը խընկուն:

Չըլլաս ըմպակ մը միսէ,  
 Զոհը յոգնած սէրին դուն,  
 Նըրթներուդ երգը չմարէ  
 Նըրթունքը պիղծ մարդերուն:

Կ՛ուզեմ որ մի՛շտ քու կիւսի  
 Սէրդ ըլլայ թուփ մը ծաղկած,  
 Կապոյտը թող սիրտդ հոսի  
 Ափէդ երկինք երկարած:

Առուակին մէջ կամի պէս  
 Կաթած շողին հետ խաղաս,  
 Թըւչուններուն պէս երգես,  
 Թիթեռներդ հոս չի մոռնաս:

Իրեն ցամբուն մէջ անկեղտ՝  
 Թիթեռն ափէդ խուսափի,  
 Ու մարդն ալ քու ետեւէդ՝  
 Քեզ մօտենայ՝ չըփամնի...:

Հ. ՍԱՀԱՆՔ

*Ձիւտակի փիա*